

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ՕՐԵՐ****Շ. Ռ. ՊԵՐԱԿԵՐԵԱՆԻՆ**

Օրերն անդարձ, խոստըմնադրուժ ճամբորդներ են,
Որոնք նըման տէրվիշներու՝ բոկոտ, անձայն,
Ժամանակի անծայր ճամբէն կ'անցնին, կ'երթան:

Ձեռքերուն մէջն իրենց ունին թագ ու աստղեր,
Եւ շըրթներուն՝ խմաստութիւն, վիշտ ու ծիծաղ,
Մեծ իղձերու անոնք աներգ մեռելաթաղ:

Ոչինչ մընաց: Անցեալի դուռն է յաւէտ փակ:
Եւ մանկութիւնս հեռու պարտէզ կախարդական...
Մեկնող օրեր խաբեցին զիս, ու ետ չեկան:

Բայց կը սպասեմ ես տակաւին իրենց ճամբուն,
Ընդունելի խոստումն անոյշ որ կ'ուշանայ,
Մինչ երկինքը կ'ըլլայ օրուան դագաղն անհուն:

ԵՂԻՎԱՐԴ**1941**